միաբանութենէն և կը մեկնի 1871ին. առ. տեղապահ Տիգրանակերտի 1874ին. կը մեկնի Պոլիս. Սահմանադրութեան գործադիր Թէքիրտաղի 1877ին. Ա.ռ. Տիգրանակերտի (1879—1880). կը ձեռնադրուի եպս. և կ'երթայ Վան 1881ին. 1889ին կը վերադառնայ Ս. Յակոբի վանքը ուր կը վախճանի 1894 ին։ Ցիշատակ կը թողու մէկ ու կէս մթերանոց Երուսաղէմի մէջ։

ՓԻԼԻՊՊՈՍ ԵՐԷՑ ՎԱՆՑԻ.— ՄՋ. Թ. 295 ձեռագիրին մէջ ունի յիշատակագրութիւն մը որ է հետեւեալը. «Ես Վանեցի տէր Նիկողայոսի որդի Փիլիպպոս երէցս. թվ. ՌՃԼԶ (=1687) եկի ի սբ. քաղաքս և ընթերցայ զսբ. մեկնիչս Ղուկաս Աւետարանչի...»։ (Խաչ. Ցուց. տետր. Թ. էջ 863)։

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԹՂ. ԱՂԲԱԿԵՑԻ.— (1633—1655). աշկ. Տաթեւացի Մովսէս կթղ.ի. 1652 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. (ՄՋ. Թ. 567 և 1625, նաև Տաշ. Ցուց. էջ 142). Փիլիպպոս կթղ. «զյատակն եկեղեցւոյ Սրբոյն Յակոբայ գեղեցկիւ յօրինուածով և նկարակերտիւ յարմարութեամբ երանգ երանգ վիմօք սալայարկ արար՝ զի թէպէտ յառաջն գոյր սալ յարկ՝ այլ ոչ էր հաւասար և դիւր. այլ բարձր և ցած, անյարմար և կոպիտ՝ և զաւագ խորանի բեմն բարձրացոյց զի յառաջն կարի ցած էր». (Դավրիժեցի, Իե. նաև ՄՋ. Թ. 85 և Թ. 228). կթղ.ին կ'ընկերանային հետեւեալ վարդապետները. Դաւիթ Շօշեցի, Բարսեղ Շօշեցի, Ներսես Տաթեւացի, Առաքել Շօռոթեցի, Գաբրիել Երեւանցի, Յոհան Երեւանցի, Յովհաննէս Մուղնեցի, Ա.ռ. Տիգրանակերտի Յովհան Աղոնեցի, Մինաս Եւդոկիացի, Ա.ռ. Գաղատիոյ, Գրիգոր Վանեցի, Աւետիս Վանեցի, Խաչատուր Բաղիշեցի, Թորոս Կեսարացի եւ Նիկողայոս Կեսարացի։ Սաղ Ներսես կրդ. ևս նոյն տարին Ս. Յակոբ ժամանած էր, իր հետեւորդներէն կը յիշուին Խաչատուր վրդ. Ա.ռ. Բերիոյ. թեմական եպս.ներէն կը յիշուին Սահակ Վանայ, Մարկոս Սասնոյ, Յովհաննէս Ակնայ, Ստեփաննոս Մոկաց, Միքայել Բաղիշոյ, եւ Պետրոս Սաղ։ Երուսաղէմայ միաբաններէն, Աստուածատուր պտրք.էն զատ կը յիշուին Խաչատուր Զնֆուշեցի, Առաքել Բաբերդցի, Թորոս եպս. և Ոնոփրիոս Լեհացի, որոնք վերև յիշուածներուն հետ մասնակցեցան Փիլիպպոս կթղ.ի նախագահութեամբ գումարուած կրօնական ժողովին. մանրամասնութիւնները տեսնել (Ազգպտմ. էջ